

<<ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ>>

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

2017թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱԲ



ԱՈՒԴԻՏՍԵՐՎԻՍ

Աուդիտորական Խորհրդատվական Ընկերություն  
Աուդիտորական Գործունեության Լիցենզիա Թիվ 006  
22, Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, տարածք 54  
email: [auditservicellc@gmail.com](mailto:auditservicellc@gmail.com), <http://www.auditservice.am>

ՎԱՆԱՃՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ. ԱՍԼԱՅԱՆՆ

ԿԱՐՏԻՔ

Մեր կողմից իրականացվել է «Վանաձորի համայնքապետարանի» 2017 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների /այսուհետ հաշվետվություններ/ աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման, համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման, համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի /դեֆիցիտի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի /դեֆիցիտի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի /դեֆիցիտի/ ֆինանսավորման աղբյուրների կատարման վերաբերյալ հաշվետվությունները:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Վանաձորի համայնքապետարանի՝ 2017թ, տարեկան բյուջեի կատարման ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական» ստանդարտի և հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող իրավական ակտերի:

ԿԱՐՏԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Վանաձորի համայնքապետարանից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխանա ուղիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ե ՎԱՌՎԱՐՄԱՆ ՕՂԱՎԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱԾ ԱՆՁԱՆՑ  
ՊԱՏԱՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՅՈՒՆՔԻՆ ԳՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վանաձորի համայնքապետարանի ղեկավարությունը պատասխանատու է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական» ստանդարտի և հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող իրավական ակտերին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Վանաձորի համայնքապետարանի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Վանաձորի համայնքապետարան կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Վանաձորի համայնքապետարանի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՌԻԴԻՏԻ ՊԱՏԱՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՅՈՒՆՔԻՆ ԳՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մերն պատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն , որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստի ացումը բարձրաստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրնաց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,

փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակ ենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Վանաձորի համայնքապետարանի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Վանաձորի համայնքապետարան անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էականան որոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Վանաձորի համայնքապետարանը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտ Սերվիս ՄՊԸ-ի տնօրեն,

Որակավորված աուդիտոր

Որակավորված աուդիտոր

09.02.2018թ.



Գոր Դավթյան

Արշավիր Զուրաբյան